

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարության և Ղազախստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարության մաքսային կոմիտեի միջև մաքսանենգության և մաքսային կանոնների խախտման, ինչպես նաև թմրամիջոցների, հոգեներգործող նյութերի և բաղադրամասերի ապօրինի շրջանառության դեմ պայքարում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարությունը և Ղազախստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարության մաքսային կոմիտեն, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,

նպատակ ունենալով ակտիվացնել գործողությունները մաքսանենգության և զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, թմրամիջոցների, հոգեներգործող նյութերի և բաղադրամասերի ապօրինի առևտրի կանխման, քննման և խափանման գործում,

ձգտելով այդ բնագավառում զարգացնել համագործակցություն,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Պայմանավորվող կողմերը, ղեկավարվելով իրավահավասարության և փոխադարձ հարգանքի սկզբունքներով, Պայմանավորվող կողմերի պետությունների ազգային օրենսդրություններին համապատասխան և սույն Համաձայնագրի շրջանակներում կհամագործակցեն մաքսանենգությունը և մաքսային կանոնների խախտումը, ինչպես նաև զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, թմրամիջոցների և հոգեներգործող նյութերի ապօրինի շրջանառությունը կանխելու, քննելու և խափանելու նպատակով:

Հոդված 2

Պայմանավորվող կողմերը կձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ուղղված բեռնային ու ուղևորային հաղորդակցությունում ու փոստային փոխանակման մեջ մաքսային հսկողության արագացմանը, ինչպես նաև տրանսպորտային միջոցների, բեռների, ուղեբեռի, փոստային առաքումների, արժույթի, այլ վճարամիջոցների և արժույթային արժեքների ապօրինի ներմուծման, արտահանման և

տարանցման կանխմանը՝ Պայմանավորվող կողմերի պետությունների տնտեսական և այլ շահերը հնարավոր վնասից զերծ պահելու նպատակով:

Հոդված 3

Պայմանավորվող կողմերը սույն Համաձայնագրի հիման վրա համագործակցում են միմյանց հետ իրենց իրավասության շրջանակներում և, պահպանելով ազգային օրենսդրությունը, կփոխանակեն.

ա) տեղեկություններ գործող մաքսային օրենսդրության մասին,

բ) տեղեկություններ մաքսանենգության և մաքսային կանոնների խախտման դեմ պայքարի մեթոդների, ինչպես նաև մաքսանենգության և զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, թմրամիջոցների, հոգեներգործող նյութերի և բաղադրամասերի ապօրինի առևտրի կանխման, քննման և խափանման նպատակով գործողությունների ակտիվացման մասին,

գ) հսկողության տեխնիկական միջոցների, հատուկ վարժեցրած շների օգտագործման փորձ,

դ) զենքի և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի մեթոդների ուսուցման նպատակով մասնագետներ,

ե) մաքսանենգության և զենքի ու թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի հարցերով գիտական հրապարակումներ և ուսումնական ձեռնարկներ,

զ) տեղեկություններ թմրամիջոցների և հոգեներգործող նյութերի նոր տեսակների և արտադրության վայրերի, դրանց ապօրինի տեղափոխման երթուղիների ու թաքցնելու միջոցների մասին,

է) տեղեկություններ թմրամիջոցների և հոգեներգործող նյութերի նույնացման և լաբորատոր հետազոտության բնագավառում,

ը) տեղեկություններ տարբեր երկրներում և տարածաշրջաններում զենքի և թմրամիջոցների գների փոփոխման մասին,

թ) տեղեկություններ ելակետային քիմիկատների մասին, որոնք օգտագործվում են թմրամիջոցների սինթեզման համար,

ժ) ինչպես բուսական, այնպես էլ սինթետիկ ծագմամբ թմրամիջոցների նմուշներ,

ժա) տեղեկություններ զենքի, ռազմամթերքի և պայթուցիկ նյութերի ապօրինի տեղափոխման երթուղիների և դրանք թաքցնելու եղանակների մասին:

Հոդված 4

Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը, իր սեփական նախաձեռնությամբ կամ մյուս Պայմանավորվող կողմի հարցմամբ, տրամադրում է օպերատիվ տվյալներ՝

ա) մաքսանենգությամբ կամ զենքի, թմրամիջոցների, հոգեներգործող նյութերի և բաղադրամասերի ապօրինի առևտրով զբաղվող կամ այդ գործում կասկածվող անձանց մասին,

բ) տրանսպորտային միջոցների, բեռների և փոստային առաքումների մասին, որոնք օգտագործվում են մաքսանենգ առարկաների փոխադրման համար,

գ) մաքսանենգ առարկաների հայտնաբերման և մի երկրի տարածքից մյուս երկրի տարածք թմրամիջոցների ապօրինի տեղափոխման փաստերի մասին:

Հոդված 5

Պայմանավորվող կողմերի տրամադրած ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր տեղեկությունները կհամարվեն գաղտնի և կօգտագործվեն միայն սույն Համաձայնագրի կատարման նպատակով:

Պայմանավորվող կողմերը, առանց մյուս Պայմանավորվող կողմի համաձայնության, այլ գերատեսչություններին և զանգվածային լրատվության միջոցներին չեն տրամադրի սույն Համաձայնագրին համապատասխան ստացած տեղեկությունները, եթե դրանց տարածումը կարող է վնաս հասցնել մյուս Պայմանավորվող կողմի շահերին կամ Պայմանավորվող կողմերի համատեղ գործողությունների շահերին:

Հոդված 6

Եթե Պայմանավորվող կողմերից մեկի հարցումը մյուս Պայմանավորվող կողմին (սույն Համաձայնագրի 3-րդ և 4-րդ հոդվածներին համապատասխան) կարող է վնաս հասցնել մյուս Պայմանավորվող կողմի պետության ինքնիշխանությանը և ազգային անվտանգությանը, ապա դիմումը կարող է մերժվել՝ նշելով հիմքերն ու շարժառիթները:

Հոդված 7

Պայմանավորվող կողմերի պետությունների օրենսդրությունների հիման վրա և փոխադարձ համաձայնությամբ մաքսային ծառայությունները անհրաժեշտության դեպքերում օգտագործում են թմրամիջոցների ու հոգեմերգործող նյութերի վերահսկելի մատակարարման մեթոդը՝ դրանց ապօրինի շրջանառությանն առնչվող անձանց բացահայտելու նպատակով:

Վերահսկելի մատակարարման մեթոդի կիրառման մասին որոշումները Պայմանավորվող կողմերն ընդունում են յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար առանձին և կարող են, անհրաժեշտության դեպքում, հաշվի առնել Պայմանավորվող կողմերի ֆինանսական պայմանավորվածությունները:

Հոդված 8

Եթե Պայմանավորվող կողմերից մեկը շահագրգռված է մյուս Պայմանավորվող կողմի պաշտոնատար անձի՝ մաքսանենգության կամ մաքսային կանոնների խախտման փաստով որպես վկա կամ փորձագետ մասնակցությամբ, ապա նա իրավունք ունի դիմելու մյուս Պայմանավորվող կողմին համապատասխան հարցումով:

Այդ հարցման բավարարումը կանոնակարգվում է սույն Համաձայնագրի 3-րդ և 4-րդ հոդվածներով:

Պայմանավորվող կողմերից մեկի պաշտոնատար անձինք մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածքում գտնվելու ընթացքում պետք է ունենան իրենց պաշտոնական լիազորությունների փաստաթղթային հաստատում:

Հոդված 9

Սույն Համաձայնագրի կատարման և մեկնաբանման հետ կապված բոլոր վիճելի հարցերը Պայմանավորվող կողմերի միջև լուծվում են բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

Հոդված 10

Պայմանավորվող կողմերի համաձայանեցմամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ: Փոփոխությունները և լրացումները ձևակերպվում են առանձին արձանագրություններով, որոնք հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը և ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 13-րդ հոդվածով սահմանված կարգով:

Պայմանավորվող կողմերի միջև գրագրությունը կիրականացվի ռուսերեն:

Հոդված 11

Պայմանավորվող կողմերը հրաժարվում են սույն Համաձայնագրի կատարման հետ կապված ծախսերի հատուցման պահանջներից, բացառությամբ մասնագետների այցելության հետ կապված ծախսերի:

Հոդված 12

Սույն Համաձայնագրի դրույթները չեն շոշափում Պայմանավորվող կողմերի պետությունների՝ միջազգային այլ պայմանագրերին համապատասխան ընդունած պարտավորությունները:

Հոդված 13

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի՝ դիվանագիտական ուղիներով միմյանց Համաձայնագրի ուժի մեջ մտնելն ապահովող անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին ծանուցելու օրվանից և կգործի 5 տարվա ընթացքում, որից հետո այն ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդ հինգ տարով, եթե Պայմանավորվող կողմերից ոչ մեկը համապատասխան ժամկետը լրանալուց առնվազն 6 ամիս առաջ գրավոր չձանուցի մյուս Պայմանավորվող կողմին Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու իր ցանկության մասին:

Կատարված է Աստանա քաղաքում 1999 թվականի սեպտեմբերի 2-ին, երկու բնօրինակով, հայերեն, ղազախերեն և ռուսերեն, ընդ որում բոլոր երեք տեքստերն էլ հավասարազոր են:

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման անհրաժեշտության դեպքում հիմք է ընդունվում ռուսերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2000 թվականի դեկտեմբերի 8-ից: